

ՈԱԶՄԻԿ ՄԱՐԻԿՅԱՆ

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և
իրավունքի ինստիտուտի ասպիրանտ

ՀԱՅ ԿԱՆՈՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՄԿՁԲՆԱՎՈՐՈՒՄԸ

Հոդվածում հանգամանորեն լուսաբանված է հայ կանոնական իրավունքի սկզբնավորումը: Քրիստոնեության ընդունումը մեծ ազդեցություն ունեցավ հայ իրավունքի աղբյուրների զարգացման վրա: Հայ իրավունքում կանոնական իրավակարգերի նորմերի պարտադիրությունը սահմանվում էր հայ եկեղեցու սանկցիաների միջոցով: Հետևաբար, կանոնական որոշումները հանդիսանում էին որպես հայկական իրավունքի աղբյուր և պարտադիր էին ամբողջ երկրի համար:

Հիմնարար բառեր - կանոն, եկեղեցական իրավունք, օրենսգիրք, մովսիսյան օրենքներ, ընդհանուր իրավունք, բնաանեկան իրավունք:

Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հաստատվելուց հետո ընդհանրական քրիստոնեական եկեղեցուն բնորոշ վերոնշված գործառույթները՝ իրավաստեղծ, արդարադատության (իրավարար), աստիճանաբար ձևավորվեցին մասնաճյուղային միջավայրում: Դավանաբանական պայքարն ու պատմական անհրաժեշտությունն էին, որ ստիպեցին Հայաստանյաց եկեղեցուն դարեր շարունակ առաջատարի դերը ստանձնել տարբեր ոլորտներում¹: Այս առումով անգնահատելի են Հայոց եկեղեցու դերն ու նշանակությունը հայ հասարակական-քաղաքական և իրավական մտքի ձևավորման գործում, քանզի մինչև ուշ միջնադար (XVIII-XIX դարեր) գիտությունն ու մշակույթը ամբողջովին գտնվում էին եկեղեցու հովանու ներքո: Եկեղեցու և Վռամշապուհ թագավորի նախաձեռնությամբ էր, որ ստեղծվեցին հայոց գրերն ու գրականությունը, թարգմանվեցին բազում աստվածաբանական և փիլիսոփայական երկեր, կրթվեցին սերունդներ և ձևավորվեցին ազգային մշակույթ, մտածելակերպ և գաղափարախոսություն: Եկեղեցին նպաստեց մասնաճյուղային ինքնակառուցման (պետականության) շարունակական գոյատևմանը՝ նույնիսկ կենտրոնացված թագավորական իշխանության բացակայության պայմաններում: Սա գուտ հայկական-ազգային ինքնատիպ սոցիալ-քաղաքական և իրավական երևույթ է ողջ միջնադարում:

Հայ ժողովրդի բազմադարյան պատմության տարբեր ժամանակաշրջաններից մեզ հասել է մշակութային անգնահատելի ժառանգություն՝ պատմագրության, գրականության, փիլիսոփայության, իրավագիտության և մյուս ճյուղերին վերաբերող թարգմանական ու ինքնուրույն երկեր, ճարտարա-

պետության, արվեստի և այլ բնագավառների հույսակապ հուշարձաններ: Վազգեն Հակոբյանը նշում է. «Միջնադարյան հայ մատենագրության մեջ պահպանվել են մասնաճյուղային հասարակական տարբեր շերտերի սոցիալական և իրավական հարաբերություններն արտացոլող խոշոր հուշարձաններ: Այս հուշարձանները հանդիսանում են յուրատեսակ հայելիներ, ուր առմիշտ բյուրեղացվել են անցյալ կյանքի իրավանդումները, որոնք միջոց էին կարգավորելու հասարակության համակեցությունը՝ հոգուտ տնտեսական ու քաղաքական իշխանություն ունեցող դասակարգի՝ «ազատ»-ների շահերի: Այլ կերպ չէր էլ կարող լինել, որովհետև միջնադարում իրավունքը խարսխվում էր հողի ավատական սեփականության (հողային ռենտա) և դասային արտոնությունների սկզբունքի վրա: Դա մի սկզբունք էր, որը մեկընդմիշտ առկա էր դարձնում որոշակի մի պատմաշրջանում քարոզված արդարության բեկված նժարները: Իսկ այդ սկզբունքի գաղափարական սրբազործումը պատկանում էր քրիստոնեական վարդապետությանը»²:

Ինչպես վերը նշեցինք, միջնադարում հայ ժողովրդի ազգային գաղափարախոսության այս, ինչպես և մյուս բնագավառներում առավելապես իշխում էին եկեղեցու սկզբունքներն ու դոգմաները:

Հայոց Առաքելական եկեղեցին թեև եղել է ավատական նվիրապետության ծնունդ, իր էությամբ, գաղափարախոսությամբ և կազմակերպական կառուցվածքով ավելի կենտրոնաձիգ բնույթ ուներ, քան հայ Արշակունի կամ Բագրատունի թագավորությունները:

Ինչպես իրավագիտորեն նշում է հայ իրավունքի պատմության հայտնի հետազոտող Միրական Տիգրանյանը. «Հայաստանում, ինչպես որ հին և

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

միջին դարերի այլ երկրներում, հայոց ազգային ինքնական քաղաքական պայմաններում չկար եկեղեցական առանձին և պետական առանձին հանրակեցություն. հայոց միևնույն հանրակեցություն՝ և՛ եկեղեցի էր, և՛ պետություն էր միանգամայն. մեկ հանրակեցություն կար՝ «հոգևոր» և «մասնավոր»³:

Միրական Տիգրանյանը հայոց ազգային հանրակեցությունը բաժանում է երկու ժամանակաշրջանի՝ ազգային պետականության (որտեղ գերակշռողը թագավորական կամ մախարարական իշխանությունն է) և երկրորդ շրջանը՝ ազգային եկեղեցականության (եկեղեցապետականություն. Ռ.Մ.), «երբ հայոց պետականության մարմինները կործանվում և չքանում են, դրանց տեղը բռնում են այլազգի օտար իշխողները, իսկ ազգային հանրակեցության ասպարեզում գերակշռում է հայոց եկեղեցականությունը՝ օժտված ազգային պետականության որոշ ֆունկցիաներով և պարագաներով»⁴:

Հայ եկեղեցին հենց սկզբից իրագործում էր «գործակալութեանն մեծի դատաւորութեանն»⁵ պաշտոնը, այսինքն՝ իր ձեռքում էր պահում օրենսդրական և դատավարական գործունեությունը⁶: Եվ երբ հայ ժողովուրդը թագավորական կենտրոնական պետականությունը կորցրեց, եկեղեցու այս դերն ավելի ուժեղացավ, որովհետև հայ եկեղեցին կարողացավ պահել իր կենտրոնական սրբազան կազմակերպությունը, որը խարսխվում էր մի ժողովրդի դավանանքի սկզբունքի վրա: Այդ երևույթը հնարավորություն տվեց եկեղեցուն՝ համեմատաբար, ավելի լայնորեն ըմբռնելու ժողովրդի հանրահանուր քաղաքական շահերը, քան ավատական առանձին տները: Դա մի երևույթ էր, որ նկատում ենք հայ իրականության մեջ ողջ միջնադարում:

Ինչպես նշում է պրոֆեսոր Խ. Սամուելյանը. «Եթե մեզ չեն հասել մինչև XII դարը հայերեն կազմված օրենսգրքեր, ապա հասել են կանոնագրքեր, այսինքն՝ եկեղեցական կանոնների ժողովածուներ, որոնք կազմվել են թերևս սկսած V դարից և հանդիսանում են հայ իրավունքի միակ գրավոր ամենահին աղբյուրները»⁷:

Հայոց Առաքելական եկեղեցին իր զարգացման, մասնավոր իր կազմավորման սկզբնական շրջանում հիերոկրատական ինստիտուտն ամրացնելու և նրան հանրային նշանակություն ու ազդեցություն տալու նպատակով մշակում և հորինում էր իր սոցիալ-քաղաքական տիրապետության դասա-

կարգային գաղափարախոսությունը: Սահմանվում էին հատուկ պարտավորություններ, խրատներ, հրահանգներ, որոնք պարտադիր էին քրիստոնեական համայնքների համար և կոչվում էին կանոններ⁸: Հայ մատենագրության մեջ «կանոն» բառով արտահայտված են այն որոշումները կամ գրությունները (շրջաբերականներ, նամակներ), որոնք շոշափել են տվյալ դեպքում ավատական հասարակության համակեցության ձևերը, հասարակության անդամների փոխհարաբերությունները, ապրելակերպը, երբեմն՝ ընդհուպ խիստ անձնական վարկեցողության ձևերը, ժառանգության, քաղաքացիական, քրեական իրավունքի և իրավաբանական այլալի հարցեր:

Սկսած V դարից՝ հայ մատենագրության մեջ հանդես են գալիս ինչպես օտար թարգմանական, այնպես էլ ազգային՝ ինքնուրույն, կանոնական որոշումներ և այլ փաստաթղթեր՝ տիեզերական, տեղական և հայկական եկեղեցական ժողովների որոշումներ կամ հույն և հայ եկեղեցական նշանավոր գործիչների գրություններ, որոնք երկար ժամանակ գոյություն են ունեցել առանձին-առանձին, ցաքուցրիվ⁹:

Կանոնը եկեղեցադիր օրենքն է: Այն պետք է լիներ հաստատ և պարզորոշ, քանի որ կարգավորում էր եկեղեցական կյանքի կանոնավոր ընթացքը: Կանոնադիր աղբյուրներ են համարվել Սուրբ գիրքը, Ընդհանրական եկեղեցու ժողովները (տիեզերական և տեղական): Հայոց եկեղեցու կողմից ընդունվել են առաջին 3 տիեզերական ժողովների (Նիկիայի 325 թ., Կ. Պոլսի 381 թ., Եփեսոսի 431 թ.) և արևելյան տեղական 6 (7) ժողովների (Անկյուրիայի, Նեոկեսարիայի, (Կեսարիայի), Գանգրայի, Անտիոքի, Լավողիկեի, Սարդիկեի) կանոնները, որոնք տեղ են գտել «Կանոնագիրք Հայոց» ժողովածուում: Սրանց ավելանում են ընդհանրական եկեղեցու հայրերի սահմանած (կամ նրանց անունով հասած) կանոնները, ինչպես նաև Հայոց եկեղեցու ազգային-եկեղեցական ժողովների և եկեղեցական գործիչների սահմանած կանոնները:

Ինչպես Ա. Բոգոյանն է նկատում, Կանոնագրքի ստեղծման պատմությունը պետք է բաժանել երեք փուլի.

1. Հովհաննես Օձնեցուց առաջ գոյություն ունեցած ժողովածուներ,
2. նրա կողմից ստեղծված հավաքածու,
3. այս ժողովածուի հիմքի վրա հետագայում կատարված ընդարձակումներ և նոր խմբագրու-

թյուններ, որոնք իրենց հերթին ընդգրկում են մասնավորապես Օձնեցու հավաքումից առաջ ստեղծված մի շարք կանոնախմբեր¹⁰ :

Այսպիսով, եկեղեցին յուրացնում է իր իրավադիր գործառույթները, որոնց չափն ու սահմանը պայմանավորվում էին տվյալ երկրի քաղաքական կացությամբ: Հիերոկրատիան իրեն իրավունք էր վերապահում ոչ միայն կարգավորելու եկեղեցու և կղերական դասի ներքին հարաբերությունները, պարտականությունները, տնտեսական-գույքային հարցերը, սահմանադրություն կազմելը, այլև միջամտելու աշխարհիկ հասարակական հարաբերություններին, դա ենթարկելու եկեղեցու կողմից կրոնա-աստվածաբանական դոգմատիկայով. տարածվում էր գլխավորապես ընտանեկան իրավունքի որոշ կողմերի վրա, այն է՝ ամուսնության, որդեծնության, ազգակցության աստիճանների, ծնողների ու զավակների փոխհարաբերությունների, նմանապես որոշ տեսակի հանցագործությունների վրա, ինչպես սպանություն, առևանգում, պոռնկություն և այլն: Ահա այդ հարաբերությունները կարգավորող նորմերը կազմում էին կանոնական իրավունք, այսինքն՝ կանոնների իրավադիր համախմբում, որով կանոնը հակադրվում էր օրենքին՝ որպես աշխարհիկ իրավաբանական նորմ¹¹:

Կանոնադիր գործունեությունը և կանոնական որոշումները, որպես կանոնական իրավունքի աղբյուրներ, աչքի ընկնող նշանակություն ունեցան ընդհանրապես հայոց պատմության և մասնավորապես հայ իրավունքի պատմության մեջ:

Անհրաժեշտ է ընդգծել, որ գրավոր օրենսդրության առաջին հիշատակությունները Հայաստանում առկա են միայն գրերի գյուտից (405 թ.) հետո: Այդ շրջանից է մեզ հասել քրիստոնյա հայկական համակեցության հիմքը կազմող Աստվածաշնչի թարգմանությունը, որը հասարակության բարոյական նորմերի և իրավական մոտեցումների ձևավորման համար կարևոր խթան է հանդիսացել: Ազգային ավանդների հիմքի վրա առաջացած հայ քրիստոնեական մատենագրության մի շարք հուշարձաններ ևս իրենց մեջ ամբարել են իրավական մտածողության տարրեր, որոնք շուտով իրենց արտացոլում են գտել ավատական հասարակության պայմաններում ձևավորված կանոնագրքերում և դատաստանագրքերում: Գարերի ընթացքում իրավունքի գրավոր հուշարձանների քանակն աճել է նոր երկերով: Հայոց իրավունքն օրինադրելու իմաստով ավելի աչքի ընկնող է եղել եկեղեցու դե-

րը, քանի որ թագավորության կորստի երկարատև դարաշրջաններում եկեղեցին է գրավել ազգային պետականության թափուր տեղը: Հայոց իրավունքի հուշարձանները ողջ միջնադարի ընթացքում անցել են ազգային հանրակեցության իրավաճանաչողության բովոյ, իսկ նրա սկզբունքները դարերի ընթացքում կիրառվել են հայ ժողովրդի հասարակական կյանքում:

Սկսած V դարից՝ հայոց մատենագրության մեջ մուտք են գործում մի շարք թարգմանական կանոնախմբեր՝ Տիեզերական (Նիկիայի, Կոստանդնուպոլսի, Եփեսոսի) և տեղական (Անկյուրիայի, Կեսարիայի¹², Նեոկեսարիայի, Գամգրայի և այլն) եկեղեցական ժողովների որոշումները: Հայերեն են թարգմանվում առաքյալներին և եկեղեցու սուրբ հայրերին (Բարսեղ, Աթանաս և այլն) վերագրվող կանոնախմբերը: Այդ կանոնախմբերի մի նշանակալի մասը մեզ է հասել ուրույն խմբագրությամբ և բնագրով, որը չի համապատասխանում մայր բնագրի այսօրվա վիճակին: Արդեն հնագույն պատմական վկայություններում տեղեկություններ են պահպանվել այն մասին, որ մեր եկեղեցու առաջին հայրերը լրացրել են դրանք և համապատասխանեցրել Հայաստանի իրավական դաշտի կարիքներին: Առաջին անգամ Շահապիվանի (444 թ.) ժողովում այդ վավերագրերը ի մի են հավաքվում, և նրանց վրա ավելացվում են Հայոց ազգային եկեղեցու կողմից ստեղծված մի շարք կանոնախմբեր (Գրիգոր Լուսավորչի, Սահակ Պարթևի և այլն): Կանոնագրքի այս նախնական ժողովածուն հետևողական խմբագրության է ենթարկվում նախ Ե դարի վերջին՝ Հովհաննես Մանդակունի (կթղ. 478-490 թթ.) Կաթողիկոսի իշխանության տարիներին: VI-VII դարերում Տիեզերական եկեղեցում սկիզբ առած դավանաբանական պայքարին մասնակցում էր մաս Հայոց եկեղեցին, որը ևս հրավիրում էր ժողովներ (Դվինի 2-րդ, Կարին-Թեոդոսուպոլսի և այլն) և հստակեցնում իր դիրքը հրապարակ եկած վարդապետությունների և Տիեզերական եկեղեցու կանոնների նկատմամբ:

Հունական և ասորական կանոնները մուտք են գործել Հայաստան ու թարգմանվել են հայերեն V դարից՝ հայերեն տառերի գյուտից հետո, մանավանդ որ արդեն V դարում Բյուզանդիայում գոյություն ուներ տիեզերական ու տեղական ժողովների որոշումներից բաղկացած կանոնների մի կողմը: Սակայն շուտով օտար կանոնական հավաքածուների ռեցեպցիայի հետագա զարգացմանը վերջ է

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

տրվում ստեղծված քաղաքական պայմանների շնորհիվ:

Երբ Հայաստանում վերջիվերջո հաղթանակեց պարսկական կողմնորոշման քաղաքականությունը, և դրա հետ միասին հայ եկեղեցին միանգամայն անջատվեց հունականից՝ շրնդումներով Քաղկեդոնի տիեզերական ժողովի դավանաբանական որոշումները, հայ հիերոկրատիան իրեն անկախ զգաց: Նա միջամուխ էր լինում նախարարական տների ու արտաքին քաղաքական հարաբերություններում, մաս ազդեցիկ դեր էր խաղում երկրի ներքին կյանքում: Կենտրոնացված թագավորական իշխանության բացակայումով նա իր ձեռքն առավ դատավարական ու իրավաբանական ամբողջ գործունեությունը: Հույն և հայ եկեղեցիների անջատման պահից սկիզբ են առնում Հայաստանում, հայ հիերոկրատիայի ձեռներեցությամբ, ազգային, եկեղեցական ժողովները, որոնք սահմանում են կանոնները, ստեղծում նորմատիվ կարգեր իրենց իրավասության ու քաղաքական ազդեցության կովաններն ամրացնելու և ընդհանրապես տիրապետող դասակարգի շահերն ապահովելու ուղղությամբ: Ուստի հայ եկեղեցական ժողովների կանոնական որոշումները մեծ մասամբ կրում էին ո՛չ միայն կրոնա-դավանական բնույթ, այլ վերաբերում էին ներքին աշխարհիկ հասարակական հարաբերություններին՝ կարգավորելով այն հատկապես սահմանված իրավաբանական նորմերով: Այս տեսակետից հայ եկեղեցական ժողովների կանոնական որոշումները մեծապես տարբերվում էին նախկին տիեզերական եկեղեցական ժողովների կանոններից, որոնք ռեցեպցիայով ընդունված էին Հայաստանում, մաս հետագա հունական եկեղեցական ժողովների կանոնական որոշումներից: Բնորոշ է, որ հայ եկեղեցական ժողովներին երբեմն մասնակից են եղել նաև աշխարհիկ ֆեոդալները, և տարբեր դասի ներկայացուցիչները, մասնավորապես քաղաքական ճգնաժամային պահերին, օրինակ՝ Շահապիվանի (444 թ.), Գվինի II ժողովը (648 թ.): Այս հանգամանքը հիմք է տվել լիբերալ պատմագետներին, նույնիսկ հայ իրավունքի պատմության հայ իրավագետներին վեր հանել այդ ժողովների նշանակությունն իբրև դեմոկրատական ազգային ինստիտուտներ, դրանք համարել ժողովրդական ներկայացուցչական հաստատություններ՝ նմանեցնելով յուրատեսակ պառլամենտարիզմի, որ զարգացել է Հին Հայաստանի հասարակական-քաղաքական կյանքում:

Ազգային եկեղեցական ժողովներն իրենց վերապահում էին օրենսդիր կամ իրավադիր գործառույթներ: Դա բացահայտ է այն բնորոշ դարձվածքներից, որոնք գործածվում են հայ հին մատենագրության ու կանոնական որոշումների բնագրերում: Փավստոս Բուզանդը, պատմելով Աշտիշատի ժողովի մասին (365 թ.), բնորոշում է նրա գործունեությունն այս խոսքերով. «կարգեցին, կազմեցին, կանոնեցին, յօրինեցին...» (III գլ. Դ., 76). «յօրինեցին» ծագում է «օրենք» բառից, հետևապես պետք է հասկանալ՝ «օրենսդրեցին»: «Կարգեցաք և սահմանեցաք», ասվում է Կարինի ժողովի կանոնական որոշումների մեջ (ԿՀ, էջ 108): Շահապիվանի ժողովի որոշումների նախաբանը վերջանում է «սպա կարգեցին և եղին այսպէս» խոսքերով, որոնք նույնպես նշում են օրենսդիր ֆունկցիայի վրա (ԿՀ, էջ 60):

Հետաքրքիր ձևով են վավերացվում Գվինի 648 թ. ժողովի հորինած 12 կանոնները. «Ես Ներսէս Շնորհիւն Աստուծոյ նուստ կաթողիկոս հայոց վասն վերոգրյալ կանոնիս ամենայն աթոռակցովք մերովք սուրբ եպիսկոպոսք հայոց ձեռնարկեալ կնքեցաք ըստ հրամանի և սահմանի հոգւոյն սրբոյ եւ ընտրելոց նորա» (Անդ, էջ 129): Երբեմն էլ եկեղեցական ժողովների որոշումներում «կանոն» տերմինը չի հակադրվում «օրենք» բառին աշխարհիկ առումով, այլ գործածվում է վերջինիս հետ համագործ նշանակությամբ (ԿՀ, էջ 111, 127, 115, 57, 59): Թեև «օրենք» տերմինը հայ կանոններում մեծամասամբ այլ նշանակություն ունի, այն է՝ կրոնապաշտամունքային կարգ, ծես և կամ Մովսիսական իրավունքի նորմեր՝ որպես աստվածային կանոն (ԿՀ, էջ 87, 88):

Նմանապես «սահմանք» տերմինը հաճախ կրում է «կանոնի», «օրենքի» հոմանիշ իմաստ, այստեղից էլ կանոնական որոշումներում հաճախ են պատահում «սահմանել, սահմանադրել» բայերը՝ օրինադրել, կանոնադրել առումով: «Զգուշութեամբ պահեսցի ի միջի ձերում սահմանքս յաս կանոնական» (ԿՀ, էջ 43), «սոյնպէս կարգեալ և սահմանեալ եղիցին» (ԱՆԳ, էջ 54). «ըստ սահմանի սրբոց հարցն և սրբոյն Գրիգորի և բարեպաշտ թագաւորին Տրդատայ» (ԿՀ, էջ 129):

Ազգային եկեղեցական ժողովները իրենց վերապահելով օրենսդիր գործունի նշանակությունը, տրամաբանորեն պետք է կանոնական որոշումներին տային պարտադիր ուժ: Դա բացահայտ և հաճախ գործածվող «կանոն այդ կացցէ» դարձված-

քից (ԿՀ., էջ 63, 67, 68, 72 և այլն), «կանոնք ոչ հրամայեն» (ԿՀ., էջ 83): Կանոնական որոշումների պարտադիր նշանակությունն ավելի ցայտուն կերպով շեշտվում է Շահապիվանի ժողովի որոշումների նախաբանում, ուր առաջ են բերված աշխարհիկ ժողովականների համաձայնության խոսքերը. «Արդ, օրենք որ Աստուծոյ հաճոյ են եւ հաստատուն պահենք և եթէ որ հաստատուն ոչ պահիցէ զկարգս օրինաց կամ եպիկոպոս կամ երէց կամ ազատ կամ շինական, պատուհաս կրեսցէ և տուգանս տացէ» (ԿՀ., էջ 59-60):

Վերն ակնարկեցին, որ հայ եկեղեցական ժողովների կանոնադրական գործունեությունն սկսվել է V դարից, Արշակունյաց թագավորության անկումից հետո: Սակայն պետք է ենթադրել, որ եկեղեցական ժողովներ տեղի են ունեցել նաև նախկինում, Արշակունիների թագավորության շրջանում: Ավելի հավաստի տեղեկություն ենք գտնում Փավստոս Բուզանդի Պատմության մեջ Աշտիշատի ժողովի (365 թ.) մասին, որի հորինած կանոնների բովանդակությունը նա մեզ ավանդում է: Բնորոշ է, որ այդ ժողովի մասին մեր մյուս մատենագիրները լռություն են պահպանում, բացի Մովսես Խորենացուց, ով ժողովի վայրը չի հիշատակում: Նմանապես բազմաթիվ կանոնագրերի ձեռագրերում ոչ մի տեղ չի նշվում Աշտիշատի կանոնների որևէ հետք: Մինչդեռ Փավստոս Բուզանդի առաջ բերած կանոնների բովանդակությունը հետաքրքրական նյութ է տալիս հին հայ մի քանի սովորույթների մասին:

Սակայն մեզ հասած կանոնական որոշումները բխում են հենց այն եկեղեցական ժողովներից, որոնք տեղի են ունեցել V դարից սկսած: Այդ ժողովների մեջ անդրանիկը համարվելու է Շահապիվանի ժողովը, որ կայացել է 444 թ., երբ Հայաստանի ներքին ու արտաքին քաղաքական կացությունը խիստ խառնակ ու անկայուն էր, մի ժամանակ, որի հետ են կապված Վարդանանց պատերազմի հետ առնչվող դեպքերը:

Հայ կանոնական իրավունքի հիմնական աղբյուրն է Ս. գիրքը՝ Հին և Նոր կտակարանները:

«Աստվածաշունչը» հավաք օրինաց չէ, սակայն Հին և Նոր կտակարանները Հայաստանում քրիստոնեության ընդունումից հետո ունեցել են հիմնական օրենքի գորություն, մասնավորապես մովսիսական օրենքներն ունեցել են գործնական կիրառություն և, հետևաբար, զգալի ազդեցություն թողել հայ կանոնական իրավունքի ձևավորման և

զարգացման վրա:

Հայտնի է, որ միջնադարյան Հայաստանում եկեղեցու գաղափարախոսական հիմքը Աստվածաշունչն էր, ուր արձանագրված բարոյախրատական նորմերը կազմում էին այն օրենքը, որոնցով առաջնորդվում էր միջնադարյան հասարակությունը: Կրոնի, հավատի ու դավանանքի հիմնական հոմանիշն է դառնում օրենքը: Այս հասկացության տակ հասկացվում էր բարոյախրատական նորմերի այն ամբողջությունը, որով առաջնորդվում էր կրոնական տվյալ համայնքը, այս դեպքում՝ Հայոց եկեղեցին, որի բարոյախրատական ամենահզոր զենքը Աստվածաշունչն էր: Քրիստոնեության առաջին դարերից Հայաստանում ստեղծվում էին կանոնական ժողովածուներ, որոնք վերաբերում էին եկեղեցու դավանաբանությանը (Ազաթանգեղոսի պատմության հատված դարձած «Վարդապետութիւն»-ը, Գրիգոր Լուսավորչի «Յաճախապատում» ճառերը), որոնք ունեին նաև բարոյախրատական նշանակություն և Աստվածաշունչից բերված բազմաթիվ քաղվածքներով կարգավորում էին քրիստոնյա հասարակության բարոյական և դավանաբանական սկզբունքները: V-VII դարերի ընթացքում քրիստոնեական աշխարհը հուզած դավանաբանական վեճերը իրենց շրջապատույթի մեջ առան նաև Հայաստանը, որն ընտրեց իր սեփական ուղղությունը դավանաբանության մեջ և դրանք ամրագրեց իրավական նշանակություն ստացած ժողովածուներում (Կնիք հավատո, Գիրք թղթոց): Դրանց նպատակն էր արձանագրել և պաշտպանել Հայոց եկեղեցու ծիսական և դավանաբանական առանձնահատկությունները դավանական ոտնձգություններից:

Կանոնական նորմեր ընդունում էին ընդհանրական եկեղեցու տիեզերական, տեղական և ազգային ժողովները, նրանց երևելի առաջնորդները: Եվ պատահական չէ, որ հայ կանոնական իրավունքը բաղկացած է երկու հիմնական մասերից՝ թարգմանված կամ փոխառված (ասորերենից և հունարենից), և ազգային-եկեղեցական կանոնախմբերից: Ընդհանրական եկեղեցու իրավական սահմանումներից հայ եկեղեցին ընդունել և իր համար պարտադիր է ճանաչել երեք տիեզերական ժողովների՝ Նիկիայի (325), Կոստանդնուպոլսի (381) և Եփեսոսի (431), վեց արտաքին տեղական ժողովների՝ Անկյուրայի (314), Կեսարիայի, Նեոկեսարիայի (315), Անտիոքի (341), Սարդիկայի (344-347), Գանգրայի (349-370) և Լավողիկիայի

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

(365) կանոնախմբերը, որոնք մտել են հայոց կանոնագիրք և գործադրվել Հայաստանում: Հայոց եկեղեցին, հետևելով ընդհանրական եկեղեցու օրինակին, ընդունել է նաև քրիստոնեության վարդապետության երևելի և հեղինակավոր հայրերի կանոնները, որոնք գործել են մինչև Քաղկեդոնի ժողովը (451):

Հարկ է նշել, որ օտար կանոնների կողքին անգնահատելի է հայ ազգային-եկեղեցական կանոնախմբերի նշանակությունը հայ իրականությունում: Դրանք բաժանվում են.

ա) ազգային-եկեղեցական ժողովների՝ Աշտիշատի (354), Շահապիվանի (444), Գվինի չորրորդ (648), Գվինի հինգերորդ (719), Պարտավի (768), Սիսի (1243) կողմից ընդունված կանոնախմբեր.

բ) հայ հոգևոր առաջնորդների՝ Թադևոս և Բարդուղիմեոս առաքյալների, Գրիգոր Լուսավորչի, Սահակ Պարթևի, Ս. Ներսեսի, Ներսես Շնորհալու կանոնախմբեր:

Հայտնի է, որ Հայաստանում ազգային-եկեղեցական ժողովներին, սկսած 4-րդ դարի 50-60-ական թվականներից, մասնակցել են նաև աշխարհիկ տերերը: Ահա թե ինչու հայոց եկեղեցական ժողովներն իրենց նշանակությամբ համազգային քաղաքական հաստատություններ էին, քանզի այդ ժողովները, ի թիվս եկեղեցական-դավանաբանական հարցերի, ընդունում էին նաև աշխարհիկ օրենքներ, նորմեր, որոնք կարգավորում էին նաև համազգային նշանակության աշխարհիկ հասարակական հարաբերությունները: Այդ իմաստով հայոց եկեղեցական ժողովները որոշակի վերապահումներով կարելի է դիտել որպես եվրոպական պառլամենտների նախատիպեր¹³:

¹ Տե՛ս Շիրինյան Մանես Էռնա, Քրիստոնեական վարչապետության անտիկ և հելլենիստական տարրերը: Երևան, 2005, էջ 101:

² Տե՛ս «Կանոնագիր Հայոց» Ա., Աշխատասիրությամբ՝ Վազգեն Հակոբյանի: Երևան, 1964, էջ VII:

³ Տե՛ս Սիրական Տիգրանյան, Հայոց իրավունքի պատմության ներածություն: Երևան, 1924, էջ 29:

⁴ Տե՛ս նույն տեղը, էջ 38:

⁵ Տե՛ս Փ. Բուզանդ. «Պատմութիւն Հայոց». Վենետիկ, 1880, էջ 36:

⁶ Տե՛ս Адонц Н. Армения в эпоху Юстиниана, СПб, 1908, стр. 447. Մանանդյան Հ. Ֆեոդալիզմը Հին Հայաստանում, Երևան, 1934, էջ 76, Սամուելյան Խ. Հին հայ իրավունքի պատմություն, Հտ 1, Երևան, 1939, էջ 44. Еремян С. Т. Опыт периодизации истории Армении эпохи феодализма, «Вопросы истории», 1951, N7, С. 54.

⁷ Տե՛ս Սամուելյան Խ. Հին հայ իրավունքի պատմությունը: Հատոր 1, Երևան, 1939, էջ 40:

⁸ Տե՛ս Հունարեն xavwv բառին հայերենում համապատասխանում են երկու բառ՝ կանոն և քանոն: Կանոնը ունի մի քանի նշանակություն՝ ժամանակագրական աղյուսակ, կարգ, եղանակ, օրենք, սահմանադրություն, կարգապահություն (կարգ ու կանոն՝ կյանքի վարվեցողություն, ապրելակերպ. տե՛ս Աստվածաշնչում, Գաղ., Զ. 16, Փիլ., Գ. 16), Եկեղեցական ժողովների որոշումներ, սաղմոսի 8 բաժանումներից յուրաքանչյուրը, սահմանված շարականների կարգն այս կամ այն տոնի համար (տե՛ս «Նոր բառգիրք Հայկազյան լեզուի», Հտ. Բ, Երևան, 1944, էջ 385), իսկ քանոնը՝ տափակ և ուղիղ տախտակ փայտից կամ այլ նյութից, օրինակ ուղղության (տե՛ս «Նոր բառգիրք Հայկազյան լեզուի», Հտ. Բ, Վենետիկ, 1837, էջ 980, Ստ. Մալխասյանց, նույն տեղում, Հտ. Գ, Երևան, 1945, էջ 547):

⁹ Տե՛ս «Կանոնագիրք Հայոց», Աշխատասիրությամբ Վազգեն Հակոբյանի, էջ X:

¹⁰ Տե՛ս Բոգոյան Ա., Հայ միջնադարյան իրավունքի պատմության հուշարձանները, Էջմիածին, 2006, Է-Ը, էջ 94.

¹¹ Տե՛ս Սամուելյան Խ., նշվ. աշխ., էջ 43:

¹² Տե՛ս Կեսարիայի ժողովի կանոնախմբի բնագիրը հայտնի է միայն հայկական սկզբնաղբյուրներին: Այդ բնագրի վրա եկեղեցական ժողովների և կանոնական իրավունքի մասնագետների ուշադրությունն է հրավիրել դեռևս 1938 թ.

Ժ. Լեբոն (տե՛ս Lebon J., Sur un concile de Cnssam-in: Le Musnon, 51(1938), p. 89-132): Նա, հայերենով պահպանված այս հուշարձանի և նեստորական սկզբնաղբյուրների հաղորդած վկայությունների վրա հիմնվելով, եկել է այն համոզման, որ Կեսարիայի ժողովը տեղի է ունեցել Նիկիայի Տիեզերական ժողովից առաջ, հավանաբար 314-319 թթ. միջև: Շուտով Ժ. Լեբոնի տեսակետը քաղաքացիություն է ստանում բյուզանդագիտական գրականության մեջ (տես H.-G. Beck, Kirche und theologische Litteratur im byzantinischen Reich, Muenchen 1959, S. 50): Վ. Հակոբյանին ծանոթ են եղել այս հրապարակումները: Այնուամենայնիվ, հայագետը, մասնավոր քննության ենթարկելով Կեսարիայի կանոնախմբի հողվածները, ինքնուրույնաբար եկել է այն համոզման, որ դրանց մի մասը սերում են Անկյուրիայի ժողովի կանոնախմբի հունարեն այն հողվածներից (Կես. Ա=Anc.20, Կես. Գ=Anc.21, Կես. Դ=Anc.22, Կես. Ե=Anc.23, Կես. Է=Anc.24, Կես. Թ=Anc.25), որոնք բացակայում են Անկյուրիայի ժողովի կանոնախմբի հայերեն քարգմանության բնագրում (Կանոնագիրք Հայոց, աշխատասիրությամբ Վ. Հակոբյանի, հտ. Ա, էջ 573-574): Վ. Հակոբյանը Կեսարիայի ժողովի կանոնների պատմականության հարցը երկբայելի է համարում՝ ավելացնելով. «Թեև այլ օրակարգով Կեսարիայում ժողով լինելու մասին կան տեղեկություններ, օրինակ, մինչև Գանգրայի ժողովը Կեսարիայի մի ժողովում նգովել են Սեբաստիայի եպիսկոպոս Եվստաթեսին (տե՛ս «Սոկրատայ Սքոլաստիկոսի եկեղեցական պատմություն», Ա, էջ 205-206: Տե՛ս նաև Հեֆելեի Conciliengeschichte, Erster Band, § 48, էջ 442-443)»: Հիմնվելով Վ. Հակոբյանի եզրակացության վրա՝ Հ. Կաուֆհոլդը կարծում է, որ Կեսարիայի ժողովի հիշատակությունը հայկական, լատինական և նեստորական կանոնական հուշարձաններում շփոթի արդյունք է (հմմտ. H. Kaufhold, Die Rechtssammlung des Gabriel von Basra und ihr Verhältnis zu den anderen Sammelwerken der Nestorianer. Berlin. 1976, S. 11-14):

¹³ Տե՛ս Գառնիկ Սաֆարյան, Հայկ Խաչատրյան. Հայ իրավունքի հուշարձաններ (V-XVIII դդ.): Երևան, 1994, էջ 6-7, Սաֆարյան Գ.Հ. Միջնադարյան հայ իրավունքը և իրավաբանական միտքը (X-XIII դդ.): Երևան, 2008, էջ 23-24:

Размик Марикян

Аспирант института философии, социологии и права НАН РА

РЕЗЮМЕ

Становление армянского канонического права

В статье подробно рассматривается становление армянского канонического права.

Принятие христианства оказало большое влияние на развитие источников армянского права. В армянском праве обязательность норм канонических постановлений обуславливалось санкцией армянской церкви. Следовательно, канонические постановления являлись источниками армянского права и были обязательны для всей страны.

Ключевые слова: канон, церковное право, судебник, моисеевы законы, обычное право, семейное право.

Razmik Marikyan

Phd Student of the Institute of Philosophy,
Sociology and Law of NAS RA

SUMMARY

The formation of Armenian Canon law

The article focuses on the formation of the Armenian Canon law.

The adoption of Christianity had a great influence on the development of the sources of the Armenian law. In Armenian law, the mandatory norms of canonical regulations were determined by the sanction of the Armenian Church. Therefore, the canonical decrees were the sources of the Armenian rights and were mandatory for the whole country.

Keywords: Canon, Canon (ecclesiastical) law, code of law, the laws of Moses, common law, family law.